ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՐ»ի
ՏՈՔ · Մ · Ս · ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ·

Զեռագիրք Չեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրայ համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅՐ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D.
Տէր-Խմբագիր—Մ · Ս · ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա · ՏԱՐԻ — ՆԻՒ ԵՈՐՔ — ՆՈՅԵՄԲԵՐ 1 1891 — ԹԻՒ 21

Entered as second-class mail matter. at P. O. NewYork.

ՌՈՍԸՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ՝ուսակցութիւն Հայոց մէջ— Էինայ Հայկական Շարժում — Լարմէնի Թիւրքն — Մեծն Տիգրան Եղբարք — Խմբագիր մի — Նամակ Աշաքիէրէն — Նամակ Կեսարիայէն — Նամակ Լիմէն — Հայկական Մի՞ութիւն — Շաբաթ — Շաբաթ — Մարդասիրական Գործքանք — Հալէ- Հալէ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑՍ ՄԷՋ

Երբ ժողովրդի կամ ազգի մի մէջ հանրային կարծիք և հանրային շահեր կը գոյանան, կը կազմուին նաև կուսակցութիւններ իբրև անհրաժեշտ հետեւանք:

Մեր Ազգին մէջ վերջին տարիներս մանաւանդ ազգային — քաղաքական խնդիր մի կը յուզուի, խորհրդոյ նոր հորիզոն մի բացուած է Նորա առջև. և բնական է որ հայ կուսակցութիւններ երևան եկած լինին, վասն զի բնական որ է ամեն անհատ մի և նոյն եղանակն չունենայ խորհելու և զգալու:

Մեր Ազգին մէջ մանաւադ մտային մշակութեան մասին խորին անհաւասարութիւն կայ: Ունիմք բարձր կարգի գրագէտներ և խորհողներ չնչին թուով, թերուսներու բազմութիւն մի, և անմշակ մեծամասնութիւն մի անհուն:

Ունիմք նաև բնաւորութեան ազգային ընդհանուր գծեր, բայց անհատական, դաւառական և երկրային զգալի տարբերութիւններու խառնուած, մանաւանդ որ այլ և այլ ցեղերու և քաղաքակրթութեանց ազդեցութեանց ենթարկեալ են ազգին այլ և այլ մասերն:

Գերմանական կրթութիւն առնող Ռուսահայն խորհելու և զգալու տարբեր եղանակ մ՝ունի Ֆռանսական կրթութիւն առած Տաճկահայէն: Տաճկահայն սահմանադրական ձեւի տակ միապետական է յամենայնի, չասեմ բռնապետական. Ամեն երկրի Հայոց մէջ ալ կան յանդգնք, կան և երկչոտներ: Կան ապառաժի նման հաստատ և անյողդողդ կեցողներ՝ ճակատ պարզած բամբասանքի կարկուտին, կան նաև ապառաժի վերայ ցանուած սերմի նման Հայեր, որոց հայրենասիրութիւնն պաուստուն կը ծաղկի և երեկոյին կը չորնայ:

Այս մտային և բնաւորական զանազան պայմաններն ծանօթ լինելով՝ կրնանք դիւրաւ գուշակել թէ մեր ազգային խնդիրն որքան տարբեր տարբեր կերպերով կ՝ըմբռնուի և որքան այլազան եղանակներով նորա լուծումն կը փնտռուի:

Ցորչափ խօսիլ, քարոզել, գաղափար տարածել կ՝ուզուի, շատ վէճ չպատահիր, բայց երբ համոզումներն կը խորուընան և գործունէութեան շրջանն կը մտնուի, ահա տարբեր տարբեր կուսակցութիւններ երևան կ՝ելնեն:

Կուսակցութեանց իւրաքանչիւրն իւր մէջ կ՝ամփոփէ իրարու համաձայն կամ գոնէ մերձաձայն եղող անհատներ. այսպէսով փոխանակ ամեն գլխէ ձայն մի գալու, ամեն համախմբութենէ կու գայ ձայն մի:

Կարելի չէ երևակայել բանական էակներէ բաղկացեալ ազգ մի յորում ամեն անհատ նոյն կարծիք և նոյն զգացում ունենայ հանրային խնդրոյ վերայ. չկայ տէրութիւն մի, ուր կուսակցութիւնք չգտնուին: Ուրեմն բնական էր որ մեր մէջ ևս հանրային խնդիրներ ծագած լինելով՝ ստեղծուէին ազգային քաղաքական կուսակցութիւններ:

Ընթերցողք ոմանք գուցէ հարցանենայժմ — ուրեմն ինչո՞ւ դուք միութիւն կը քարոզէք կուսակցութեանց և գործիչներու:

«Հայք»չկամասեր կուսակցութիւններն անհրաժեշտ ընդունելով և միանգամայն պնդելով թէ պարտ է միանալ: Եւ եթէ թոյլ տաք, ձեզ բնախօսական օրինակաւ մի և օրինօք կը բացատրեմ:

Գիրք մի կայ յոյժ հետաքրքրական, զայն կարդացա՞ծ էք. թերևս կարդացած էք, բայց ոչ այնքան ուշադրութեամբ որքան ես: Այն գիրքն դու և ամեն մարդ ունի, և ունի երկու օրինակ: Բաց գիրքդ, և ես ասեմ քեզ թէ ինչպէս պարտ է կարդալ զայն: Եթէ դրպանիդ մէջ է, հանէ զայն: Այդ գիրք քո ՁԵՌՔՆ իսկ է: Ձեռքդ հինգ մատ ունի որոց անցնիւրն ունի տարբեր երկայնութիւն, տարբեր հաստութիւն, տարբեր ոյժ, և սակայն հինգն միացած ի մի ձեռն, սքանչելի կերպիւ կը գործեն: Բայց այդ առաջին գլուխն շատ կարդացուած է. անցնինք երկրորդին:

Ձեռքդ կը բանաս և կը գոցես. մատներդ կը կծկես՝ կը ծալես, կամ կը բանաս՝ կը տարածես ըստ հաճոյս: Ձեռքդ ափ կը շինես և անոր կուտաս բաժակի ձև, կամ կը փակես պնդիւ և բռունցի կը վերածես. այնու կրնաս գրիչ կամ բրիչ բռնել, այնու կրնաս փայփայել կամ բռնցի սաստիկ հարուած տալ: Իրարու հակառակ այս գործողութիւններն կը կատարին շը-

նորհիւ այնր զի մատունքդ ունին երկու կարգ դնդերներ։ (Դնդեր, muscle, անդամզննական անուն կարմիր մսին, ամեն դնդեր մսեղէն բարակ թելերու խուրձ մ՝է, որոյ երկու ծայրերն երկու տարբեր ոսկրներու կըպած է, և կրնայ կծկելով կարճանալ և ոսկրն հակել։) Մատին երկու կարգ դնդերաց մէկ կարգն պաշտօն ունի մատներն դէպ ի ներս հակել, ամփոփել, միւս կարգն՝ պաշտօն ունի ամփոփեալ մատներն դարձեալ ետ տանիլ, տարածել։ Անդամզննական լեզուաւ ամփոփիչ (flechissenr) կը կոչուին մէկ կարգի դնդերք և տարածիչ (exteuseur)՝ միւս կարգիններն։

Սակայն կը տեսնուի թէ եթէ ձախ ձեռքս տարածիչ դնդերներով միայն օժտեալ լինէր, զայն երբէք չպիտի կարենայի գոցել, և եթէ աջ ձեռքս ամփոփիչ դնդերներ միայն ունենար, զայն չպիտի կրնայի բանալ։

Նաև յաւելուլ պէտք է սա ծանօթութիւնն թէ տարածիչ դնդերքն իրենց յատուկ ջիղն ունին, ամփոփիչք՝ իրենց, այնպէս որ եթէ տարածիչներու ջիղն անդամալուծուի, նովաւ ջղաւորեալ կարգն այլ ևս չկըրնալով կծկիլ, ձեռքս ալ միանգամ գոցուելէ յետոյ չպիտի կրնայի բանալ բայց եթէ միւս առողջ ձեռքիս օգնութեամբ։ Փորձն ցուցած է նաև թէ ամփոփիչ դընդերաց գործողութիւնն ալ իր փափկութիւն և ճշդութիւն կը կորուսանէ եթէ տարածիչներն անդամալուծեալ լինին։ Օրինակի համար եթէ գաւազան մի բռնելու փորձէի այն ձեռքովս որոյ ամփոփիչներն ողջ են, մատունքս չափազանց շուտով պիտի գոցուէին և գաւազանն չպիտի բռնուէր, վասն զի տարածիչ դնդերքս անդամալուծեալ լինելով իրենց եղանակաւորիչ ազդեցութիւն ոչ ևս կը գործեն ամփոփիչներուն վերայ։ Այսպէս կը տեսնեմք թէ իրարու հակառակ եղող այս երկու կարգ դնդերներ իրարու ազդեցութեան, ընկերակցութեան կարօտ են նոյն իսկ երբ մէկ կարգն է որ յայտնի, տեսանելի դերն կը կատարէ։

Եթէ այս բնախօսական օրինակն կրցանք ըմբռնելի անել, գոյենք գիրքն։ Այժմ աւելի դիւրին է կուսակցութեանց գլուխն ուսանիլ։

Ազգն կամ Տէրութիւնն ալ կենդանի էակի կազմակերպութիւնն ունի, և նմանօրինակ օրինօք կը կառավարուի։

Երբ ընկերութիւնն այս ինչ աստիճանի զարգացման կը հասնի, երբ Ազգ, Տէրութիւն կը կազմուի, հոն որպէս թէ տարածիչ և ամփոփիչ դնդերաց դրութիւններով բարդ վիճակ մի կը ստեղծուի, այսինքն կուսակցութիւններ, ընդհանրապէս երկու գլխաւոր կուսակցութիւններ, կը կազմուին։

Կուսակցութեանց իւրաքանչիւրն խնդրոյն մէկ երեսն կը տեսնէ, կը քննէ, կը լուսաւորէ, մէկալն՝ միւս կողմն կ՝ուսումնասիրէ, կը յուզէ։ Կուսակցութիւն մի առարկայական և ենթակայական միանգամայն է. անոր անդամներն խնդիրն տարբեր կերպով կ՝ըմբռնեն ոչ միայն վասն զի խնդրոյն այս ինչ կողմն մանաւանդ կը դիտեն այլ և վասն զի այն ինչ ներքին, զգացական տրամադրութեամբք կը դիտեն զայն։

Երբ կուսակցութիւնք մէկտեղ կու գան Խորհրդարանի կամ ժողովոյ մէջ, և խնդիր մի որոշել կը ձեռնարկեն, կը տեսնես թէ ամէն կուսակցութիւն անոր մէկ կողմն կը լուսաւորէ, և այսպէսով խնդրոյն ամեն կողմն, ամբողջն կը լուսաւորի։ Ասոր հետևութիւնն կը լինի գործնականին մէջ ծայրայեղութեանց զսպումն և լաւագոյն՝ իմաստնագոյն ուղղութիւն։ Օրինակի համար եթէ կառավարութեան ղեկն վարող կուսակցութիւնն գաղթային քաղաքականութեան կը ծառայէ, չկրնար չափազանց և յախուռն ասպարէզ տալ իր քաղաքականութեան, վասն զի հակառակ կուսակցութիւնն իր փաստերով և առարկութիւններով, իբրև հակառակ դնդերաց ազդեցութեամբ, կ՝եղանակաւորէ կծկող դադօն դնդերաց գործողութիւնն։

Փութով գանք մեր հայ կուսակցութեանց։

Ամեն ուշիմ ընթերցող պիտի ընդունի թէ մեր կուսակցութիւններ բոլորովին անկարգ վիճակի մէջ են, վասն զի նոքա մէկ ժողովոյ, մէկ մարմնոյ մէջ միացած չեն, մի և նոյն վարչական կամ գործադիր դրութեան մասունքն չեն կազմեր. նոքա իրարմէ անջատ կը մնան, իրարմէ անկախաբար կը գործեն։ Անոնց իւրաքանչիւրն կ՝ընթանայ իր գաղափարօք, առանց զսպուելու, եղանակաւորուելու հակառակ կուսակցութեան ազդեցութեամբ։ Դիւանագիտականն է չափազանց դիւանագիտական, յեղափոխականն չափազանց յեղափոխական, մին կարի յոյժ դանդաղ է, միւսն՝ կը գահավիժի։ Ցորչափ առանձինն մնան, խաղաղ դիւանագիտականն պիտի հաւատայ թէ ինքն դանդաղ չէ ամենեւին, խոհեմօրէն կը շարժի, կը գործէ։ Նոյնպէս յեղափոխականն պիտի հաւատայ հաստատ թէ ինքն չափազանց չաճապարեր, և թէ իր ամեն քայլ և շարժում չափուած և քաջ կշռուած են։

Ստոյգ է, թէ այդ երկու կուսակցութեանց ևս ընթացքն ուղղութեան պէտք ունի։ Ստոյգ է թէ նոքա տարբեր պիտի խորհէին և գործէին եթէ կարենային երկու ժամի մի ժողովեալ վիճաբանիլ, կարծիք փոխանակել, փորձառութիւն պատմել։ Այս փորձ ամեն օր կը կատարուի նուազ կարեւոր խնդրոց մէջ. տարբեր համոզմանց տէր երկու անհատ ընդհանրապէս կէս ժամու խօսակցութենէ մի յետոյ կը բաժնուին չափով իւիք իրարու մօտեցած։ Միայն մեր Խնդրոց Խնդրոյն, Հայկական Խնդրոյն, մահու և կենաց Խնդրոյն դժբաղդութիւնն է որ չթողուր որ մեր կուսակցութեանց պետերն մէկ տեղ գան, կազմեն մէկ ժողով կամ կեդրոնական Ցանձնախումբ, և իրար հակակշռելով, չափաւորելով, ուղղելով, գործեն հայրենեաց փրկութեան Ս. գործն։

Քաջալերական է տեսնել թէ պետերն կը հակին դէպ ի կեդրոնացում ինչպէս ժողովուրդն հակած է, և քաջայոյս եմք թէ շատ հեռի չէ օրն յորում ամենքս անսահման ուրախութեամբ պիտի տեսնեմք գործիչներն ի մի կեդրոնական մարմին միացած յօգուտ հայրենի դատին։

ԱԿՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

Երկու խենթին խելօք մի։
Կամ բարով կամ բարովի ընկեր։
Շանը հետ ջուվալը մի՛ մաներ։
Ողջ գլոխս աւետարանին տակ չեմ դներ։
Ես երեք օրը Պաղտատ չեմ կրնար երթալ։
Ուժովը անուժը կուտէ։
Երես տուանք, ատատ կ՝ուզէ։
Մինչև խելօքը մտմտայ, խենթը տղան կու կարգէ։
Տեղդ ծանր նստէ ուր լիտր դաս։
Աղուորն աղուորնայ ինքզինք սիրել տայ,
Գէշը գիշանայ ինքզինք ատել տայ։
Օխտը տղին մարը դալը կերեր է։
Կատուն քացախ չխմեր։
Էշը չկերած խոտը ուտէ գլոխը կու ցաւի։
Ըսողին լսող պէտք է։
Չէ խաղցեր կարմրորակ, խաղցեր է կշտատորակ։
Հարուստին շունն հաչան կ՝ուզէի, կատուն՝ մէյան։
Խենթը քուն ու բաղդն արթուն։
Դանակն իր կոթը չքերեր։
Խակ անուշ, հասուն լեզու։
Թուխ աչքը մօրուց յայանի է։
Ետիդ հով լինի էջիդ ծով։
Ուղտն բերանը կթան կով մի կ՝արժէ։

ԼԱՌՄԷՆԻ ԹԵՐԹՆ

Հայկ. Խնդրոյ յառաջադէմ շրջափոխութիւնն զմի-նաս Զերազ վար քաշեց նորա տեսչական աթոռէն կեդ. Վարժարանին՝ և բերաւ ի Լոնտոն։ Ուրիշ ուսուցիչներ և դրագէտներ ալ ունիմք Պոլսոյ մէջ, բայց երկու պատճառք կային զՁերազ յայտնի գործունէութեան հոսանքին մէջ նետող, մին էր նորա պաշտօնական մասնակցութիւնն Հայկ. Խնդրոյ դիւանագիտութեան՝ Ներսիսի օրով, և երկրորդ՝ նորա բնաւորութիւն հաւատով սպառազինեալ՝ որ կը մղէ զինքն յառաջ քառսին մէջ աներկիւղ։

Նորա Ֆռանսերէն թերթն տարիէ մ'ի վեր կից ունի նաև անգղիերէն մի։ Դիւանագիտաց աշխարհին համար լոկ Ֆռանսերէնն հերիք էր։ Պիտմարք իւր դիւանագիտական ճառերու բազմաթիւ հատորներն Ֆռանսերէն միայն կը հրատարակէ, առանց գերմաներէն բնագրի։ Զերազ անգղիերէն հրատարակութեան ծախքերն և աշխատութիւնն բարդեց Ֆռանսերէնին վերայ, այն յուսով թէ Անգղիոյ, Հնդկաստանի և Ամերիկայի Հայերն պիտի գնահատեն և թերթն պիտի տարածեն անգղիախօս օտարականաց այն կարգին մէջ ևս որ դիւանագէտ չէ և Ֆռանսերէն չհասկանար, բայց ուսեալ, մշակեալ է, և քաղաքական խնդիրներու գոնէ բարոյական և մարդասիրական կողմն ճանաչել կ'ուզէ։ Եւ յայտնի է թէ Հայկ. Խնդիրն ունի իւր բարոյական կողմ ամենայն ուշադրութեան արժանի։

Հնդկաստանի և այլ դաղթականութեանց մէջ կան Հայեր ալ որք անգղիերէն միայն լաւ կը հասկանան և անգղիախօս հայ թերթ մի շատ ախորժելի պէտք է լինի նոցա։

Արդ, Լառմէնիի տարեշրջանն կը սկսի Նոյ. 1 ին, և արժան է հարցնել թէ մեք մեր պարտականութիւն կատարեցի՞նք այդ թերթի մասին, բաւական բաժանորդ գըտա՞ւ նա, թէ անգղիերէն մասին ծախքն ու տանջանքն զուր պիտի լինին մեծ մասամբ։ Լաւ բաներն կը սիրե՞մք. ձեռնհաս գրիչ և գործիչ մի, որպիսի է Լառմէնիի խմբագրապետն, կը գնահատե՞մք, թէ ապիկար և սրբապիղծ գրողներուն առջեւ պիտի բանամք սուրը գործին ասպարէզն։ Պիտի ուզեմ՞ք որ Զերազ գրէ և գրէ, ստիպուի գըրել թերթին հասցէներն ալ, մինչեւ կոտրի իւր քամակ, մինչ անդին ինքնակոչ մրագիրներ իրենց անհամութեանց համար մեր դրամ կը կորգեն։ Փրոֆ. Զերազի սիրտն չափազանց մեծ է ո և իցէ գանգատ արտայայտելու համար. այլ մեզ պարտ է չթողուլ որ նա տաժանաքիրտն աշխատի առանց գնահատուելու։

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

ԵՒ

ԹՈՒՐՔ ԽՄԲԱԳԻՐ ՄԻ

Աւանիկ Հայոց Պատմութեան մեծագոյն դէմքերէն մին, և մէկ տեսակետով, քան զամենայն մեծն։ Հայ ցեղին անցեալն քննողին սոյն կարևոր հարց մի կ'ելնէ, այն թէ ինչու՞ Հայերն աշխարհակալութեամբ մեծցած ահագին կայսրութիւն մի հիմնած չեն ինչպէս այլ ասիական ցեղերու ոմանք։ Այդ հարցման պատասխանել չունիմք ստ. միայն կը շատանամք մատնանիշ անելով զՏիգրան Բ., մեր Ազգին հզօրագոյն թագաւորն որոյ աշխարհակալութեան լեռնահանգոյն ալիքներն փրփրադէզ անցան սահմանակից տէրութեանց սահմաններէն և լսելի արին իրենց սպառնալից մռնչիւն մինչև ի Հռովմ։

Անցեալ տարի երբ Կ. Պոլսոյ հայոց մէջ յեղափոխական յուզումն նոր էր, թուրք լրագիր մի ձեռնարկեց ցուցնել թէ Հայեր երբէք անկախ ազգ և մեծ տէրութիւն եղած չեն յանցելումն, ուստի և իրենց այժմու վիճակի մէջ տէրութիւն ձեւանալու ձգտումն անհեթեթ

ՏԻԳՐԱՆ Բ.

ԱՐՏԱՏՊԵԱԼ Հ. ԹՈՐՈՍԵԱՆԻ

« ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ » ԷՆ

է։ Թուրք լրագրապետն չէր կրնար սակայն չյիշել գոնէ զՏիգրան Բ. որոյ մեծութիւնն սեղմեց մինչև աւատական իշխանի մի համեմատութեանց և բանակն իջեցուց 10, 000 ի։ Ծաղրելի՛ պատմագէտ և խե՛ղճ խմբագիր։

Թէ մեր ժամանակակից մեծ պատմագէտներն ո՛րքան տարբեր կերպով կը չափեն Տիգրանայ մեծութիւնն, բաւական կը յայտնուի Ռոլինսընի սա խօսքերէն.— Պարթեւաստան յայտնապէս շատ կը վախնար զինուորական զօրութենէն և ագահ տրամադրութենէն Տիգրանայ, որոյ շարունակ կ'աճէր ոյժն։ Սոփէնէի թագաւոր Արտաշիսի պարտութեամբն (Ստաբոն), նա (Տիգրան) տէր դարցած էր Հայաստանի՝ նորա լայնագոյն սահմաններով, Պարթեւաստանի իսկ հետ պատերազմներով նա առածէր զԿորտիյանէ և զԱտիապէնէ..., Զյիշուած միջոցներով իրեն հպատակեցուցած էր Մեսիա Ադրոբադէն կարևոր երկրին թագաւորն...։ Ի Սիրիա հրաւիրուելով՝, իրբ 83 ին առանց դժուարութեան հաստատեց ինքզինք իբրև թագաւոր Կիլիկիոյ, Սիւրիոյ, և մեծագոյն մասին Փիւնիկէի։ Նա ստացաւ « Արքայից Արքայ տիտղոսն։ » (Տես Ճօրճ Ռոլինսընի Պարթեւաստանն, երես 124։)

Վիգդոր Տիւրիւյ, Ֆռանսացի պատմիչն, իւր « Պատմութիւն Հռովմայեցւոց » գործոյն Բ. Հատորին մէջ սապէս կը խօսի Տիգրանայ վերայ (երես 801.— Պարթեւաց յաղթահարիչ, զորս քշած էր մինչև ի խորս Ասիոյ, և աշխարհակալ Սիւրիոյ, ուրկէ Սելեւկիացւոց իշխանութիւնն ամօթալի կերպով աներևոյթ եղած էր, Տիգրան էր յայնժամ քան զամենայն հզօր միապետն Արեւելից։ Առաջնասիոյ բոլոր զինուորական և վաճառական ուղիներն բռնած էր նա,.. որ կողմ ո՛ր արձակէր նա իւր ձայն, կարող էր Հայաստանի լեռնադաշտէն գահավիժել անթիւ զօրաց բանակներ, որոց ահեղ ընթացքն ոչ ինչ պիտի կրնար կարծես կասեցուցանել։ Համբաւեալ իշխաններու բազմութիւն մի կ'ապրէր նորա ապա-

բանքի մէջ իբրև գերի, և երբ դուրս ելնէր, իւր կառաց առջևէն չորս թագաւորներ հետի կերթային։ Ստիպած էր զՊարթեւս թողուլ նմա « Արքայից Արքայ » տիտղոսն, որ կը թուէր նորա գերիշխանութեան ենթարկել Ասիոյ բոլոր իշխաններն։—

Այսպիսի պատկառելի հեղինակութեանց քովթուրք խմբագրին խօսքերն ինքնին կը ցնդին իբրև ցնորական։

Արժան է որ ամեն Հայ Մեծին Տիգրանայ պատմութեան ծանօթ լինի, և եւ յառեայ հայի նորա պատկերին որ երևակայական չէ, այլ օրինակեալ է Արքայից Արքային արծաթ դրամներէն, որք շատ յարգի են այժմ, և շատ թանգարանաց մէջ կը գտնուին։ Արծաթ դրամն Տիգրանայ կ'արժէր մինչև 20 լիրա 10 տարի առաջ, բայց վերջերս շատցած լինելով այնքան չարժէր։ Մեք տեսանք մէկ հատն Կ. Թ. Գոլէֆին Նախագահ Թրպրիճի քով։

Վենետիկոյ Հ. Թորոսեանի « Ընտիր Հայկազունք »-էն արտատպեցինք վերի պատկերն Տիգրանայ, և ջերմագին կը յայնձնարարեմք այդ պատուական գրքի բաժանորդագրութիւնն մեր հայրենակցաց, վստահացնելով զիրենք թէ հոն ուրիշ բազում ընտիր Հայկազանց նուրբ պատկերներն պիտի գտնեն հանդերձ պատմութեամբ։ Գինն շատ աժան, գիրքն կարի սիրելի։ Փափաքողք կըրնան ուղղակի յղել իրենց բաժնեգին ի Վենետիկ կամ Նիւ Եորքի հայրենակիցք, եթէ ուզեն, կրնան « Հայք » ի խմբագրատունն գրուիլ բաժանորդ։

ՔՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Այս գրքույկ պիտի պարունակէ 27 ընտիր հայկազանց նուրբ փորագրութեամբ պատկերն։ Բաժանորդագրութեան գինն է 4 ֆրանք, կանխիկ վճարելի։ Բաժանորդագրուիլ ցանկացողք դիմեն հետեւեալ հասցէին, r Direction de L'Imprimerie Armenieune, Venise, St. Laza

ՆԱՄԱԿ ԸՐԸՐԿԵՐԻՆ

Արաբկեր, 2 Հոկտ. 1891

Պ. Շմաւոն Յովնանեան, իբր 26 — 27 տարեկան երիտասարդ, տարիէ մ' ի վեր դասատուն էր քաղաքի Ուսումնարանին։ Ինքն պարսկական հպատակ լինելով ատիճան մ'ապահովութիւն կը վայելէր։ Մէկ կողմանէ նորահաս սերունդին ազգային կրթութեան հացն կը ջամբէր, միւս կողմանէ հայրենասիրական եռանդն կ'արծածէր քաղաքիս Հայոց մէջ։ Նա լոկ խօսող չէր, այլ գործող, չինող։ Իրեն շաւղին հետևողներն շատուոր են մեր մէջ այժմ։ Երբ ըստ կարծեաց թուրք կառավարութեան՝ քուրդ Պէյերու հետ նիզակցութիւն մի վերջնապէս ամրապնդելու համար Տաւրոս կը գտնուէր նա, դժբաղդ օրէն բռնուեցաւ իւր հինգ ընկերօք հանդերձ։ Պարագաներն սապէս էին։ Արաբկերի մէջ Փոլիս Եուսուֆն — որ Ուսումնարանին տաճկաբան դասատուն եղած էր երկար տարիներ և քաջ հայերէն գիտէր, անանկ որ ամեն մարդ զինքն Հայ կրնար կարծել. և մանաւանդ որ մահմէտական կրօնքին մէջ ալ թոյլ լինելովն՝ Հայերուն հայասէր կը թուէր մինչդեռ իրօք ազգասէր ճշմարիտ թուրք մ'էր — աս Եուսուֆ Արաբկերի մէջ փոլիս կարգուած էր հայոց հայրենասիրական շարժումներն լրտեսելու պաշտօնով, և արդարև ամեն տուն կը մտնէր կ'ելնէր, ամենուն համակրելի էր դարձած, և երբ իբրև բարեկամ ներկայ գտնուէր Հայոց խնջոյքներուն, մեր ազգային երգերն ալ մեզ հետ կ'երգէր, միայն թէ երբեմն կը փոխէր մի քանի բառ, օրինակի համար կ'ասէր «թող կործանի Ռուսաստան, թող փրկուի Տաճկաստան։» Եուսուֆի համար լսուեցաւ թէ Հնչակեանց գործունէութիւնն մեր մէջ կասեցունելու ծրագիր մի կը պատրաստէ։ Օր մ' ալ գիշերայն երբ տուն կը վերադառնայր, յանկարծ դանակներու հարիւր հարուածոց ներքև խնալով հոգին փչեց Եուսուֆ։

Կառավարութիւնն կարծեց գտած լինել սպանիչներն երբ զ Պարոն Դանիէլ գտաւ ի Տաւրոս վարժապետ Շմաւոնին հետ Բրդաց մէջ։ Տիյապի Էշիրէթին զլուխն եղող Սիւլէյման Աղան, թուրք կառավարութեան հրահանգին համեմատ, հրաւիրած էր զՊ. Շմաւոն և նորա ուղեկիցներն ի ճաշ. սոքա իրենց զենքեր և ռումբեր սենեկին մէջ կը կախեն և սեղանատունն կը անցնին, ճաշն կ'աւարտեն Աղային հետ, սուրճն կը խմեն, և ահա յանկարծ 30 ի չափ Բրդեր ներս կը խուժեն կը կապեն զՊ. Շմաւոն, զՊ. Դանիէլ և ուրիշ 4 ուղեկիցներն, և կը տանին դէպի Խարբերդ։ Ուրիշ քուրդ Պէկ մի իմանալով դէպքն՝ 50—60 զինեալ քրդեր ճամբայ կը հանէ կալանաւորներն փրկելու, բայց ժամանակին չեն հասնիր, 6 Հայերն բանտարկուեցան, դատուեցան և դեռ կը դատուին, Այժմիկ 14 հոգի Արաբկերցի կան բանտարկեալ ի Խարբերդ այլ և այլ ազգային գործերու առթիւ։ Կը յուսացուի թէ սոցա ամենուն ալ անմեղութիւնն ապացուցուելով պիտի արձակուին։

ՀՈՒՐ

ՆԱՄԱԿ ԿԵՍԱՐԻԱՅԷՆ

4 Հոկտ. 1891

Այս կողմեր ճէլլով անուն նշանաւոր աւազակ մ' երեւան ելած է, զոր չեն կրնար բռնել։ Կեսարիայի շուրջն, 3—4 ժամ հեռուներն ճամբորդներ կը կողոպտէ և կը վիրաւորէ։ Հարիւրապետ Սէյֆուլլահն ալ վիրաւորած է։

Պատմեմ ձեզ զինուորներուն քաջութիւնն ալ։ Քաջութիւնն ո՛չ աւազակներուն կամ թշնամեաց դէմ, այլ քաղաքիս մէջ և Հայերուն դէմ։ Անցեալ ուրբաթ օր նոր զօրք հանեցին քաղաքէս. սոքա լալով և ցաւագին թիւրքի գեղգեղելով պալատ զնացին ժողովեցան, ուրկէ մեկնելու առեն ճամբուն վերայ հանդիպողներուն տուին գաւազանի կոպիտ հարուածներ. Կէմիճեանի և ուրիշ Հայերու գլուխներն պատռեցին, կնոջ մի զարնելով դատին փռեցին, ուրիշներու ձեռքերն ջարդելու չափ հարուածեցին. Բէօֆնէլեան Յակոբ Աղային ալ զարկին, մինչեւ անգամ Տաճկաց ոմանց ալ խաղողներն կոխոտեցին։ Կէմիճեան արիւնաթաթաւ կը դիմէ կառավարութեան, « էֆէնտիմ, կ'ըսէ, աս ինչ է մեր քաշածը. եթէ անոնք զինուոր կ'երթան, մեք ալ դոգերով փարա կուտամք. եթէ կուզէք մեք ալ զօրք տամք փոխանակ դրամի. դատաստան կը պահանջեմ։ » Հաղարապետն կը պատասխանէ ու կ'ըսէ « գառնո՛ւկս չորպաճի, ձգէ՛, արիւնդ լուա, տուն գնա՛։ » « Ո՛չ, կ'ասէ Հայն, արդարութիւն կը պահանջեմ, եթէ ոչ Լիվա փաշային պիտի դիմեմ, և Պոլիս ալ հեռագիր պիտի տամ. ...։ » Ստիպուած բռնեցին զինուորներուն չորսն, և բանտարկեցին, չգիտեմ վերջն ինչ եղաւ։

Քաղաքիս բողոքականաց վարժարանին դասատու Կիւպէնքեանն կառավարութեան աչքին վնասակար (միւզիր) երեւցած էր, զինք ձերբակալել կ'ուզէին. բայց փութացած փախած է, այնպէս որ այս վնասակարին ճնաս ընել չպիտի կրնայ բարեխնամ կառավարութիւնն։

Տաճկաստանի մէջ այժմ յաչս կառավարութեան ճնասակար է ամեն անձ որ Հայ ազգին իմացական զարգացման կը ծառայէ։

ՊԵՏ

ՆԱՄԱԿ ԼԻՆԷՆ

Լին. 7 Հոկտ. 1891

Մեծ. Խմբագրապետ,

«Հայք» ի 14 դ և 15 դ թիւերուն մէջ Ամերիկայի Հայոց վիճակին նկատմամբ գտայ մի քանի ուշագրաւ կետեր որք շատոնց իվեր խորհրդածութեանս առարկայ եղող տխրաւորթ իրողութիւնք յիշեցուցին։

Տասն կամ տասնեհինգ տարիներ առաջ Հայ անու-

նը Ամերիկայի մէջ չբացուած վարդի մի կը նմանէր, նոյն էր տարի մ՚ առաջ այս քաղաքիս մէջ նաև. իսկ այժմ Հայեր, մանաւանդ մի քանի քաղաքաց մէջ ժողովրդեան ամենաստորին դասն կը նկատուին։ Հոս, երբ տեղացիք Հայու մը պատահելու լինին, թողլով իրենց խօսակցութիւնն, իսկոյն արհամարհոտ դայրացմամբ կը ջանան ըմբռնել աւելորդ արարած մը անշնորհք երևոյթով, ու հետևաբար ժողովուրդ մը այնօրինակ անհատից բաղկացեալ։

Մի քանի օր առաջ Հայ մը կօշիկի գործարան մը ելթալով գործ կը խնդրէ ուր գործաւորաց վարպետն իւր գործոյն անյարմար գտնելով զայն, մօտիկ գործարանի մը բակին մէջ գործու մը կ՚առաջնորդէ։ Խեղճն մէկ կամ երկու ժամ հազիւ գործած՝ կը սկսի շէնքին պատուհաններէն կօշկակարաց աղաղակն ու սպառնալիքն լսել։ Տա մարդը Հայ է, Հայ, պօռալով և ամենքն միացած մեր դժբաղդ հայրենակիցն վռնտել կուտան։

Ի՞նչ է այս ողբալի վիճակին պատճառն։ Գլխաւոր պատճառ մը այն է որ մեր ժողովուրդն հագուելու և երևութի մասին չատ անմաքուր է։ Ուրիշ պատճառ մ՚ալ այն է որ մեր հայրենակիցք սովորած ըլլալով 6 տալեռով կամ ատոր նման չաբաթականով յաճախ աշխատելու, այնքան հեռու երկրէ եկած, Ամերիկացւոց աչքին չատ անպիտան արարածներ կ՚երևին։ Երրորդ և մեծ պատճառ մը, մեր էճէնթներն են, որք նուաստաբար իրենց անգործ և անճարակ հայրենակիցներն նուաստութիւն ընելու կ՚առաջնորդեն երբ գործադուլ կը պատահի. գործադուլով պարպուած գործարանաց մէջ հայերն կ՚երթան կը գործեն, և այսպէսով դլուղ ընկերակցութիւններուն յայանի թշնամութիւնն, գործարանապետաց լռիկ արհամարանքն իրենց վրայ կը հրաւիրեն իրդև վատ, սողացող, օձաբարոյ էակներ։

Դարմանին գալով, կը խնդրեմ որ ձեր յօդուածներն այս խնդրոց մասին անպակաս ընէք, և Ցանձնաժողով մը կազմէք որ ջանայ միջոցներ ձեռք առնուլ, որ յորդորէ անոնք որ տգիտութեամբ և անկարդութեամբ վատթար դիրքեր կը բռնեն, նզովէ հրապարակաւ անոնք որ striker ներու տեղ դրաւելով բնիկներուն զայրոյթն կը գրգռեն, որ դիմադրէ այն անխիղճերուն որք մեր անդէտ եղբայրներն կը խաբեն, կը կողոպտեն և ամեն կերպ անպատիւ ընթացքի կ՚առաջնորդեն։

Հ. Ց. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հայկական Միութիւնն, իւր հինգերորդ տարեդարձի հանդէսն կատարելէ յետոյ, պարապուրդ ունեցաւ ամառուան եղանակն, ըստ սովորութեան, և իւր վեցերորդ տարեշրջանի նիստերն սկսաւ Սեպտ. 26 ին, Ֆուփր Եուներնի Մեծ Ժողովասրահին մէջ։ Նոյն նստի մէջ նոր պաշտօնէից ընտրելիներ նշանակուեցան և Հոկտ. 10 ի նստին մէջ քուէարկութեամբ ընտրուեցան հետևեալ պաշտօնեայք. — Տ. Ց. Ս. Թաւշանճեան՝ ատենապետ, Տ. Ց. Հիւրմիւզ՝ փոխ ատենապետ. Տ. Ց. Ցակոբեան՝ գանձապետ, Տ. Ե. Խիտավէրտի՝ ատենադպիր, Տր. Ա. Իշխանեան՝ փոխ ատենադպիր, Տ. Տ. Տատրեան գրապետ, և Տր. Մ. Ս. Գարրիէլեան՝ Գործադիր Ժողովոյ կազմիչ կամ պետ։ Նոյն նստին բանախօսն էր Տ. Թաւշանճեան, որ անցեալ ամառ Կ. Պոլիս այցելած լինելով՝ պատմեց իւր տպաւորութիւններ պարզ և ախորժելի ոճով։ Շնորհիւ այդ բանախօսութեան կարող պիտի լինիմք և մեք, երբ Տաճկաստան վերադառնալու բաղդն (°) ունենամք, դիտնալ մեր ուղեւորութեան ատեն Փարիզն ց Կ. Պոլիս, թէ ուր կ՚աւարտի օտար հողն և ուր կը սկսի օսմանեանն — օսմանեան երկրի աներկբայելի նշան է հողոյն անմշակ և խոպան վիճակն, և եթէ պահակ զինուորներ տեսնենք, սոցա ալ աղքատիկ հագուստն, գրեթէ պատառատուն։ Իպոլիս հանելով մեր ամեն քայլափոխ պիտի զգացունէ մեզ թէ թրքաշէն փողոցաց վերայ ենք, և վա՛յ եթէ ո և է ցաւ ունենամք յոտս, դի քայլել տանջանք պիտի լինի, և ուր կոխելու խնդիրն առաւել պիտի զբաղեցունէ մեր ուշ քան մեր խօսակցին իմաստալից բանքն կամ նորօրինակ տեսարանք։ Արեւելքի բաղում տեսարանաց մէջ պիտի գտնեմք մին գոնէ բոլորովին անփոփոխ, այն է շներու կենցաղավարութիւնն. այդ կենդանիներ, դարերէ ի վեր, սերնդէ սերունդ երես առած Օսմանցւոցմէ, սովոր են ճամբաներուն վերայ ընկողմանիլ ինչպէս իրենց հաճելի թուի, և անցորդին անկ է իւր շաւիղ ոլորտապտոյտ գործելշընական խմբակներու կամ ջուխտակաց յարգելի հանգիստն չվրդովելու համար։ Եւ եթէ Սուլթան Համիտ Բ. ի երեսն տեսնել կարենամք պիտի նկարուած գտնեմք անդ անհուն հոգ և մտատանջութիւն, չարաչար աշխատող և քիչ քնացող վեհապետի մի տիպար դէմքն։

Հայկ. Միութեան Հոկ. 24 ի նստին մէջ Տր. Իշխանեան խօսեցաւ Ամերիկացւոց քաղաքավարական կերպերուն վերայ։ Բանախօսն անդստինի տղայ դիոց ընակեալ լինելով այս երկրի մէջ, լաւ կը ճանաչէր իւր նիւթ և իւր խրատներն, մանաւանդ նորեկ Հայերուն համար, յոյժ շահեկան և ուշագրաւ եղան։ Նոյն նստի մէջ Տիար Ա. Եուսուֆեան ընթերցաւ Կիկերոնի Ատենախօսութիւնն ընդդէմ Կատիլինայ « Արուեստ Ատենախօսութեան » մէջէն։

Նոյեմբեր 7 ի նստին բանախօսն պիտի լինի Տր. Ա. Այվազեան՝ առողջաբանական նիւթի մի վերայ։

ՇԱՔԱՐ ԵՒ ՈՉ ՇԱՔԱՐ

Յայտնի է թէ յԱմերիկա եկող մեր հայրենակիցք՝ քիչ բացառութեամբ, անգրիերէն բնաւ չգիտեն, և սովրելու ալ անկարող են՝ անուսումն լինելով։

Անոնցմէ ոչ սակաւք հայերէն կարդալ անգամ չը գիտեն։ 25-30 տարեկան մարդիկ մանկանց ընդունակութիւնն և դիւրութիւնն ալ չունին օտար լեզու սովրելու։ Հետևութիւնն այն է որ կարի խեցբիկ և յաճախ ծիծաղաշարժ անգրիերէն մի կը խօսին, և իրենց խօսքերուն մէջ հազիւ երբէք ամբողջ նախադասութիւն կայ։ Յաճախ կը ստիպուին նաև մինչկատակներու նման շարժումներով և նմանութեանց միջոցաւ բացատրել իրենց միտք։

Օր մի Ուսթերի Հայերէն մէկն կը հարցնէ ընկերին «անգրիերէն չապին ի՞նչ կ՚ըսեն,» և անգրիերէն բառն, էլբմ, սովրելով կը դիմէ դէպ ի վաճառանոց։ Դժբաղդաբար ճիշդ երբ հոն կը հասնի, անկարելի կը լինի բառն յիշել, ուստի և շուրջն նայելով կը փնտռէ ուղուած առարկայն, կը տեսնէ շաքար, կ՚առնու կտոր մի և զարմացեալ խանութպանին առջև ճաշակելով շաքարն կ՚ըսէ, «չուկըր, նօ չուկըր,» այսինքն, շաքար, ոչ շաքար, — այն բանն զոր կ՚ուզէ դնել, շաքարի նման է բայց շաքար չէ։ Խանութպանն չկարենալով լուծել այս հանելուկ, կը կոչէ դրացին, որոյ առջև Հայն կը կրկնէ գործողութիւնն, շաքարէն կը ճաշակէ, երեսն կը թթուացնէ, գլուխն կը ցնցէ, փոթոթ բան մի ճաշակած մարդու պէս և կ՚ըսէ «չուկը՞ր, նօ՞ չուկըր.» իրեն յայժամ կը ցուցնեն նշայ, որմէ գոհ չլինիր մեր հայրենակից։ Դրացի տիկին մի կը կոչեն յայնժամ օգնութեան, որ տեսնելով գործողութիւնն կը ցուցնէ պաղլեղ, զոր ճաշակելով Հայն գոհ և զուարթ կ՚ըսէ, «մի ֆայվ սէնթ»— «ինձ հինգ սէնթ»— այսինքն ասկէ հինգ սէնթի կ՚ուզեմ. Այսպէս յետ երկար ծիծաղներու և զուարճութեան, հինգ սէնթի առուտուրն կը կատարուի։

Անգամ մի դարձեալ Ուսթերի մէջ Հայ մի կը դիմէ թելի գործարանին տեսչին, և համարձակ կերպիւ բայց խեցբեկ անգրիերէնով կ՚ըսէ, «Միսթըր Հօլ, իմ ֆատըր, մի մտըր, մի ուայֆ, մի թրի չիլտրըն, մի սիսթըր, հէր (տակ. ամեն) ուըրք այ ա՛օնդ քէյր.» որ բառական թարգմանութեամբ կը նշանակէ «Պարոն Հօլ, ես հայր, ես մայր, ես կին, ես երեք զաւակ, ես քոյր, ամեն գործ, հոգ չեմ ընէր.» այսինքն մեծ ընտանեաց

տէր եմ, և ամէն գործ ընելու պատրաստ եմ։ Պ. Հօլ կը կը պատասխանէ զուարճացած «պայ էնտ պայ.» կ'երթայ գործ ինդրողն կը հարցնէ ընկերներուն ի՞նչ ըսել է «պայ էնտ պայ.» «չուտով, քիչ ատենէն» ըսել է։ Արդարև քանի մ'օր յետոյ գործել կը սկսի։

Թելի գործարանին մէջ վարպետներուն մին օր մի կը կոչէ անգղիերէն փոքր ի շատէ խօսող հայ գործաւոր մի և անոր միջոցաւ կ'ուզէ պատուէր տալ թել քաշող մի քանի հայերու. թարգմանն ինքն չհասկնալով վարպետին խօսքերն, կը դառնայ իւր հայրենակցաց կ'ըսէ հայերէն «տղաք, մարի՛ ըրէք, հասկցաք ինչ ըսաւ, անանկ չէ՞. հիմա ես օլ ռայթը պիտի նետեմ.» եւ վայրկեան մի սպասելէ յետոյ կ'ըսէ «օլ ռայթ, սըր» — «չատ աղէկ, պարոն։» որպէս թէ ինքն հասկցած և միւսներուն ալ հասկցուցած լինէր պարոնին պատուէրն։

ԱՆԳՂԻԵՐԷՆԻ ԶՐԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կը փութամք ծանուցանել Նիւ Եորքի Հայոց թէ անգղիերէն դասախօսութեան ձմեռնային շրջանն սկսած է Հանրային Վարժարանին մէջ ի 23 րդ փողոց, Բ. և Գ. էվինիւներուն միջեւ, թիւ 11 րդ սենեկում և պիտի շարունակուի վեց ամիս, ամէն երեկոյ՝ բաց ի շաբաթ և կիրակի օրերէն, ժամ 7. 30 էն 9. 30։ Ուսմունքն են հետեւեալք — կարդալ, գրել, ուղղագրութիւն, թարգմանութիւն և խօսակցութիւն։ Բոլոր գրքերն և գրելու նիւթերն, թուղթ, գրիչ, մելան, վարժարանին կողմանէ ձրի կը տրուին։ Ուրեմն այն Հայեր որք կը բաղձան անգղիերէն ուսանիլ կամ անոր մէջ աւելի առաջ երթալ, պէտք է փութան օգուտ քաղել այս գեղեցիկ պատեհութենէն։ Թող երթան մեծ թուով, և ժամու ճշդութիւն պահեն։

ՄԵՐՍՈՂԷԿԵՆ ԳՈՐԾԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն,)

Այսպէս փոխակերպեալ կերակուրն որ խախաց կը կոչուի, ստամոքսէն կ'անցնի առ սակաւ սակաւ փոքր աղեաց առաջին մասին մէջ որ առաջնաղիք կը կոչուի և իբր մէկ հինգերորդ մեդր երկայնութիւն ունի։ Առաջնաղիքն աւելի լայն է քան բարակ աղիքն որ անոր կը յաջորդէ, այս պատճառաւ և մանաւանդ վասն զի իւր ծոցին մէջ մարսողական կարևոր գործողութիւններ կը կատարուին, առաջնաղիքն ևս երբեմն երկրորդ ստամոքս ձայնուած է։ Թէև առաջնաղիքի պատերէն տեսակ մի հիւթ կը թորի որ մարսիչ է նշայատեսակ սննդոց, աւելի կարևոր մարսիչ հիւթ մ'ալ ՄՍԱՆ (բանգրէաս) կոչուած գեղձէն յատուկ խողովակով մի կը հոսի առաջնաղեաց մէջ և կերակրոց ամէն տեսակին վերայ ազդուապէս կը գործէ, այսինքն նշայոտ, իւղոտ, սպիտինուտ սննդոց վերայ միանգամայն։ Աղեաց այս մասին մէջ է նաև որ մաղձն լեարդէն կը թորի խողովակի մի միջոցաւ և կը խառնուի կերակրոց։

Երբ կերակրոց զանգուածն առաջնաղիքէն կ'անցնի բարակ աղեաց յաջորդ մասին, արդէն մարսողական գործողութիւններն կատարեալ են, և ծծումն սկսած է։ Նոյն իսկ ստամոքսին մէջ աղեր և ջուր ըստ մասին ծրծուելով արեան հետ խառնուած էին. առաջնաղեաց մէջ աւելի մեծ գործունէութիւն մի կայ ծծման, որ կը շարունակուի աղեաց յաջորդ մասանց մէջ։ Որպէս զի հալած սնունդն արագապէս վաղելով իւր ուղեւորութիւնն չաւարտէ չափազանց շուտ, հապա ժամանակ լինի երակաց ծծել կերակրոց սնուցիչ մասեր որք այնքան խնամով փոխակերպուեցան, բնութիւնն բաւական երկայն ըրած է աղիքի խողովակն, որ՝ մարդուն վերայ խօսելով, նորա հասակին եօթնապատիկ երկայնութիւնն ունի։ Ուղտին աղիքն իւր մարմնոյն երկայնութեան տասն և հինգ անգամն է, և ոչխարին՝ քսան անգամն։ Աղիքն մեծ օձի մի նման գալարեալ պառկած է մարդուս փորին մէջ և օձինման ալ կը շարժի։ Վերէն սկսեալ դէպ ի վայր սողնական շարժում մ'է որ կը կատարուի, ոմպէս թէ օղակ մի կամ օղակներ յառաջանային, ինչպէս որդերու շարժումն դիտող ամէն անձ կրնայ դիւրաւ երեւակայել։ Այս սողնավարի շարժումն ստամոքսն ևս կը կատարէ։ Այս շարժման նպատակն է կերակուրն յառաջ մղել մեղմով և խառնել այնպէս որ անոր բոլոր սնունդաւոր տարրերն ի հուպ գան աղեաց ծծող երակաց և ոչ ինչ կորսուի։

ԳԱՅԼ ԱՂԻՔ կոչուած հատ մասին հասնելէ շատ առաջ արդէն սննդարար մասունք բոլորովին ծծուած և արեան խառնուած կը լինին, այնպէս որ գայլ աղիքն կը ծառայէ անմարս մասերն մթերելու մինչև որ յարմար պահուն արտաքսուին։

Ցայժամ իսկ երբ աղիքներուն մէջ շատ կերակուր չգտնուիր՝ առաւել կամ նուազ օդ կը գտնուի, այնպէս որ աղիք բաւական տեղ կը բռնեն փորին մէջ և կարող կը լինին իբր փափուկ և առաձգական բարձ իրենց վերայ կրել լեարդն՝ ստամոքսն՝ փայծեաղն, և մինչև անգամ վաղելու և ցատքելու պահուն զայնս կը պահպանեն ցնցմանց վտանգներէն։

Սննդական խողովակն իւր բոլոր յարակից և օժանդակ գործարաններով մէկտեղ նման է քաղաքի մի այն մասին ուր գործարաններ ու վաճառատներ հաստատուած են, և ուր այլ և այլ նիւթիր կը բերուին կը բենթարկին, կը ժողովին, փոփոխութեանց, կը համբարուին և ի վաճառ կը դրուին։ Իսկ մարմնոյն ուրիշ մասեր, այսինքն ձեռք, ոտք, աչք, ականջ, ուղեղ և որ իկարգին, նման են քաղաքի այն թաղերուն ուր ընտանիքներ հաստատուած են և ուր կը գործածուին և կը սպառին պատրաստ նիւթերն։ Գալով աշխատաւոր և արտադրիչ մասանց վարչական յարաբերութեան այն միւս մասանց հետ որք ընդունող և սպառող են, կրնամք ըսել թէ սպառիչ մասն թէև բարձրագոյն բնութիւն ունի և իշխան է, սակայն աշխատաւոր կամ գործաւոր մասին ներքին կառավարութեան միջամտութիւն չըներ և չկրնար ալ ընել։ Մարդկային մարմնոյ գործաւոր մասն կատարեալ ինքնորինութիւն կը վայելէ և իշխող մասին հրամանաց չըսպասեր։ Օրինակի համար պատառ մի հաց ծամել և կուլ տալ քո կամքէ կախուած ունի, բայց կուլ տալէ յետոյ՝ ո՛և իցէ իշխանութիւն չունիս զայն ստուգիդ մէջ յառաջանալէ արգիլելու, կամ ստամոքսին մէջ անոր մարսուիլն և աղեաց մէջ անոր ծծուիլն խափանելու։ Եւ ո՞չ ապաքէն քեզ համար բարեբաղդութիւն մ'է այս։ Դու կերակուրդ կ'ուտես և գործիդ կը պարապիս առանց հոգ ունենալու և գիտակից լինելու թէ ներսի դիդ ինչ կնճռուտ գործողութիւններ, ինչ քիմիական ամուսնութիւններ, ինչ թորումներ, ինչ զտումներ և ծծումներ կը կատարուին ցայդ և ցերեկ անդադար։ Այս աւելի կը վայելէ քո իշխանական վեհանձնութեան քան եթէ հարկ լինէր քեզ ամէն բանի խառնուիլ, ամէն ստորին գործողութիւն տնօրինել և որպէս թէ խոհանոցին և մառանին մէջ ժամանակդ վատնել։ Դու բարձրագոյն պաշտօններով զբաղելու սահմանեալ ես, իսկ անթիւ սպասաւորներ մեծ հաւատարմութեամբ կը կատարեն քեզ համար ծառայական այդ գործեր։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՀՆՏԱԽՏՆ (գալէտա)

Հալէպէն 7,000 Հրէայ փախած են Հնտախտի պատճառաւ։ Ախան տարածուած է նաեւ Այնթապի և Ուրֆայի մէջ։ Իսկէնտէրունի և ուրիշ քանի մի ծովեզերեայ աւանաց մէջ եւս դէպքեր պատահած են։ Մէքքէի ուխտաւորներն այս տարի եւս բիւրաւոր եղած են. միայն եէմէնցիներն նուազ բազմաթիւ գտնուած են ապստամբութեան պատճառաւ։ Մեծ Շէրիֆն երեւցած չէ այս տարի ի Մէքքէ, և այս բացակայութիւն դէշ տպաւորութիւն գործած է։ Առողջապահական միջոցներու շատ հոգ տարուած չէ. այն աւազանին մէջ ուստից ուխտաւորաց

ջուրն կու գայ, օրն հազար հոգի կը լողնար։ 180 հազար ոչխար զենեալ են. և երրորդ օրն փոսութեան բուրումն սոսկալի էր։ Ուխտաւորներն ի դարձին դէղ ի դէղ կը թափէին անապատին մէջ հնտախտահար։

Զարն անսովոր գործունէութիւն մի կը ցուցունէ այժմ միջազգային դիւանագիտութեան մէջ։ Մէկ կողմէն ձեռքն երկնցուցած է դէպ Բամիր, ի Կեդրոնական Ասիա, սպառնալով Բրիտանական Հնդկաստանի դռներն ծեծելու. միւս կողմանէ Հապէշիստանի մէջ ոչ պաշտօնական գործունէութեամբ՝ Իտալիոյ շարժմանց վերայ ազդեցութեան միջոց կը պատրաստէ։ Հեռաւոր երկրաց մէջ՝ սրա այս շարժումներ նպատակ ունին Անգղիոյ և Իտալիոյ շարժումներն եղանակաւորել միջերկրականի մէջ և Կ. Պոլսոյ շուրջն։ Զարերուն ուանդական փառասիրութիւնն էառնուլ զ Կ. Պոլիս և հանդիսանալ առաջնորդող Տէրութիւնն Եւրոպիոյ. Աղեքսանդր Գ. ի ձկտումն ալ դէպ այդ գերագոյն դիտակետ է։

Կը կարծուէր անցեալներ թէ Զարն զհետ է եօթնպետեան նիզակակցութիւն մի յօրինելու որոյ անդամքն պիտի լինէին Ռուսիա, Ֆռանսիա, Յունաստան, Սերպիա, Մոնթէնէկրո, Տանիմարքա, և Շուէտ. և կ'ասէին թէ, եթէ յայդմ յաջողէր, յայնժամ պիտի առաջարկէր Վեհափոդով մ'անել որ առակս միջազգային խնդիրներն լուծելով՝ ապահովէր խաղաղութիւնն և ընդհանուր զինաթափութիւնն հնարաւոր գործէր։

Զարն կարէ շատ մեծահոգի և բարի վեհապետ լինիլ, բայց անկարելի է նախատեսել թէ խաղաղութի՞ւն կամ պատերազմ պիտի ուզէր նա երբ Եւրոպայի զինուորական զօրութեան գերակշռութիւնն ապահովապէս իւր թեր ունենար։

...Եւ կրնայինք յայնժամ տեսնել զ Կէս և զ Արջ ահաւոր մրցման բռնուած, մին ուզելով կլանել զ Կ. Պոլիս, միւսն դնելով իւր սոսկալի թաթ անոր վերայ։

Անցեալ Օգոստոս ամսոյ մէջ օտար երկիրներէ ի Միացեալ Նահանգս գաղթողներուն թիւն եղած է 416 հազար 570 հոգի, մինչդեռ 1890 ի Օգոստոսին մէջ եղած էր 336 հազար։ Գերմանիայէն եկած են 83 հազար, Ֆրանսայէն՝ 4 հազար, Իռլանտայէն 42 հազար, Իտալիայէն 55 հազար, Պոհեմիայէն՝ 8, 400, Հունգարիայէն՝ 18 հազար, Ռուսիայէն՝ 44 հազար, Նորվեկիայէն ու Շուէտէն՝ 38 հազար։ Կը հաշուեն թէ այժմ այս երկրին մէջ անդործ մնացած մէկ միլիոն մարդիկ կան իբրև հետևանք չափազանց մեծ թուով եկող օտարականաց։

—Մեր Մանչէսթրի թղթակիցն կը գրէ. — Տիար Սոփոնիկ Պէզիրճեան և Տիար Տիգրան Նահապետեան միայն Հայ երկու արուեստագէտքն են Բրիտանական Կղզեաց մէջ։ Տիար Պէզիրճեան է գլխաւոր զարդարիչ, և իբրև այնպիսի՝ իւր գործ կը գնահատուի նոյն իսկ անգղիական արքունեաց մէջ։ Նորա որդին իբրև երաժիշտ քննադատ կ'աշխատակցի անգղիական թերթի մի, և դուստրն, Օր. Պէզիրճեան, հմուտ երաժիշտ և երգիչ, նշանուած է Տր. Մ. Պէնթլէյի, որ պատուոյ անդամ է երաժշտութեան Արքայական Ակադիմիային, և համբաւաւոր ուսուցչապետ։

Իսկ Տիար Տ. Նահապետեան (նախկին աշակերտ ողբացեալ Էքսէրճեանի) գլխաւոր արուեստագէտն է Մանչէսթրի աշխարհահռչակ տպագրի ընկերութեան Կրաֆթընև ընկ.։ Այս օրինակներնալ ուրիշ հայ ականաւոր արուեստագէտներու օրինակին նման չե՞ն ցուցներ թէ Հայերն անհատապէս քաջ կը յաջողին ե՛ւ ի Հայրենիս ե՛ւ յօտարութեան, և թէ ո՞րքան հզօրագոյն և յաջողագոյն պիտի լինէին եթէ գիտնային հաւաքաբար ևս գործել կատարեալ ներդաշնակութեամբ։

— Հոկ. 25 ին Տիար և Տիկին Գեւորգ Սինանեան ի Պրուքլին տօնեցին իրենց ամուսնութեան հինգերորդ տարեդարձն երեկոյթ մի տալով իրենց բազմաթիւ բարեկամաց։ Առաւել քան 50 հիւրեր ներկայ էին, ի միջի որոց կը գտնուէին Ամերիկացիներ ևս Նուագածուութիւն, պար, խաղ, արեւելեան և ամերիկեան անուշեղէնք, անգղիերէն և հայերէն զուարճալի հատուածոց առոգանութիւնք իրարու յաջորդելով՝ զերեկոյթն գործեցին վերջին աստիճան զուարթ և հաճոյական։

Տ. ԼԵՒՈՆ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ մահուան պատճառ եղող հիւանդութեան նկատմամբ հետևեալն կը գրէ մեզ հանգուցելոյն Ամերիկացի մէկ բարեկամն Տեթրոիթէն, Հոկ. 20 ին. — « Նորա հիւանդութիւնն էր նախապէս կրիփն, որուն խառնուեցաւ յետոյ թոքային տկարութիւն, արդիւնք անբաւական կերառութեան և անխնամ վիճակի։ Գտնուեցան վերջապէս բարեկամք և ամեն հնար ի գործ դրին յամոքել նորա նեղութիւններն։... Էլմուուտի գերեզմանատան մէջ թաղուեցաւ նա, ի քաղաքիս, ի 27 սեպտեմբերի։ Ձերդ ճշմարտիս, ՍԹԱՆԼԻ Պ. ՍՄԻԹ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՕՔ

ԵՒ

ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ս. Ս. ԳԱԲԲԻԷԼԵԱՆՑ

Գին մէկ թալէր կամ հինգ ֆրանգ. ճանապարհի ծախքն հրատարակչին վերայ է. բայց յանձնարարութիւնք չեն կատարուիր եթէ գինն կանխիկ չվճարուի։

Տաճկաստան ղրկուելու օրինակներէն յատկապէս վերցուած է Ազգային Ընթերցուածոց յաւելուածն, եւ եթէ Տաճկաստանի վարժարանաց հոգաբարձութիւններէն խնդրուի, գնէն 100ին 50 զեղչ կը լինի.

ՍԱՀՄ

Կը խնդրեմք « Հայք » ի այն բաժանորդներէն որք դեռ վճարած չեն, փութալ յղել իրենց բաժնեգին, յիշելով թէ տարին լմնալու վերայ է։

— « Հայրենիք » լրագիրն, երեք չաբաթ խափանեալ մնալէ յետոյ, սկսած է նորէն հրատարակուիլ։

— Խրիմեան Հայրիկ հիւանդ է Երուսաղէմի մէջ, որոյ կլիման չնպաստեր ծերունի հայրապետին։ Դժչընչութենէ և թոքային տկարութենէ կը նեղուի։ Պէտք է որ թուրք կառավարութիւնն թոյլ տայ նմա երթալ ի Նիս անցունել ձմեռն։

Ամերիկացի անուանի ցուցամարդոյն, Պարնըմի գրքէն, որոյ տիտղոսն է ՍՏԱԿ ՎԱՍՏԿԵԼՈՒ ՍԻՐԵՈՍՏՆ, հետևեալ ամփոփ վերլուծութիւնն կուտայ « Հայրենիք » Պարնըմ կը խրատէ զմեզ։—

չսխալիլ մեր կոչման մէջ, ընտրել պատշաճ բնակարան, պարտք ընելէ խուսափիլ, յարատեւել, ըրածնիս մեր բոլոր կարողութեամբն ընել, մեր անձնական ջանից վրայ միայն վստահիլ, գործածել լաւագոյն գործիներն, մեր գործէն անդին չանցնիլ, միշտ օգտակար բան մը ուսնիլ, յոյսը դեր ի վերոյ դատել առանց լինելու բանդագուշող, չցրուել մեր կարողութիւններ, կարգ ու կանոն ունենալ, լրագիր կարդալ, զգուշանալ « իր գոկծէն օտար գործառնութիւններէ », առանց ապահովութեան ուրիշի անուան չդարձնել փոխանակագիր, մեր գործն ազդարարել, յաճախորդաց հետ քաղցր ու քաղաքավար լինել, լինել ողորմած, չլինել զրախօս, պահպանել վերջապէս անձին լրջմտութիւնն։

LANDMAN & SONS,

ՎԱՃԱՌԱԿԱՆ
ՄԱՐԴՈՑ ԵՒ ՏՂՈՑ ԶԳԵՍՏՈՒՑ
ՎԱՏԵՍԵՂԵԼԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՒ ՀԱՆՔՈՒՐ ԳԻՆ.
ԵՐԲՈՐԴ ԷՎԻՆԻՈՒ, ԱՆԿԻՒՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ

TANQUEREY
ԼՈՒՍԱՆԿԱՐԴՔ

63 and 65 W. 14 th St. Corn. Sixth Ave. New York.

Կուզե՞ս $\frac{3}{4}$ բնական մեծութեամբ մէկ կենդանագիրդ ծրագրչեալ (crayon) և 12 օրինակ լուսանկար պատկերդ, ՄԻԱՅՆ ՀԻՆԳ ԹԱԼԷՌ ՎՃԱՐԵԼՈՎ. Ներկայացուր զայս կարօն վերոյիշեալ հռչակաւոր արուեստանոցն։ Վճարումն պիտի ընես հետեւեալ կերպով.

Երբ նստիս լուսանկարդ հանելու համար.....$2.50
Երբ կենդանագիրդ և լուսանկարքդ աւարտին..2.50

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 *րդ փողոցներու միջև արևելեան կողմն։*
—Ընտիր Դաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

LOUIS MULLER

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԻՆԻՈՑ ԵՒ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԷԱՑ

304 WEST 38 th STREET

8դ. Ավինիւին մօտ Նիւ Եորք

ԾՐԱՆՈՒՅՄՈՒՆԴՔ ՈՒՍԹԸՐԻՆ

ԼՈՐԴՍ ՄԵԼԴՔՈՎ
ԱՐՏԱՏՊԵԱԼ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ
ԱՅԳԵՔԵՑՓԷՆ

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Խարբերդ, Տիգրանակերտ, Մալաթիա, Կ. Պոլիս, Տրապիզոն, Մարսիլիա, և Տաճկաստանի ուրիշ քաղաքներ, դրամ կը ղրկեմ ապահով և գոհացուցիչ պայմաններով։

Դիմել առ Տ. Մ. Շուշանեան
D. M. Shooshan 41 Exchange St. WORCESTER MASS



JOSEPH LAJOIE
ԺԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ
231 FRONT ST.
WORCESTER MASS

Այս քաջածանօթ վաճառատան մէջ լաւ ապրանքներն կը տրուին չափաւոր գնով, և ժամացոյցներ կը նորոգուին խնամով ի ձեռն հայազգի ճարտար ժամագործ Տիար Փրուտի, որ նոյն վաճառատան մէջ գործելով՝ անգղիերէն խօսիլ չգիտցող Հայոց մասնաւոր դիւրութիւն կ'ընծայէ։

O. F. HARRIS
ԱՅԵՍՊԵՆԵՔՈՑՑ
476 Main St. Worcester, Mass.
ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է ԱԿՌԱՆԵՐՈՒ

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK
No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սենթի փոքր գումար կ'ընդունի։ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց առաջին օրէն կը հաշուի դրամի շահն 800ին 4։ Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4։ Շաբաթ օրերն՝ 9էն 1։

E. B. STODDARD, President.
J. STEWART BROWN, Freasurer.

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ
ԵՒ
ՆԱԻԻ ՏՈՄՍԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանգայի միջոցով։ Նաև գոհացուցիչ գներով ատմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն գալու և երթալու համար Թրիէսթի ճամբով։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի։ Պէտք է դիմել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱՊԱՊՈՔԵՐ
(*Հաստատեալ ի* 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղադիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

H. A. BASSETT
ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿՕՇԻԿԻ
259 MAIN ST. WORCESTER, MASS.
Աղէկ ապրանք և ժամն։

ՀԱՅԲԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԲ»ի բաժանորդ գրուիլ ուզողներուն կը ծանուցանեմք թէ թերթիս առաջին թիւէն սկսեալ կարող եմք յղել իրենց. նոյնպէս պակասեալ թիւերն կրնամք յղել այն բաժանորդաց որք կը բաղձան ամբողջ տարեկանն կազմել տալ, ինչպէս կը տեղեկանամք թէ շատերուն փափաքն է։

ԴՈՂՆԻՎՅԱՆ Ա. Ա.
ԴՎՎԱՎՍՅԵՆՑ